

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆ, ԷՐԶՐՈՒՄԷՆ ԱՔՍՈՐՈՒԱԾ ԱՌԱՋԻՆ ՀԱՅԵՐԸ. ՇՈՒՇԱՆԻԿ ՏԻԳՐԱՆԵԱՆԻ ՎԿԱՅՈՒԹԻՒՆԸ

Աննա Կազարեան
kazaryananna15@gmail.com



Էրզրումի գաւառակի քարտէզ (ՀԱԱ, ֆոնդ 420 (Օննիկ Ճգնատրեան), ցուցակ 16, գործ 9): Աղբիւր՝ Յուշամայրեան կայքէջ (www.houshamadyan.org)

Վերջին տարիներին հետզհետէ աւելի է աճում հայ ժողովրդին ճակատագրում Մեծ Եղեռնի իրադարձութիւնների նկատմամբ հետաքրքրութիւնը, քանի որ թուրք եւ թուրքամէտ պատմաբանները փորձում են խեղաթիւրել պատմական ճշմարտութիւնները: Այդ խնդրի ճշգրիտ ըմբռնմանը նպաստել են պատմագիտական մի շարք աշխատութիւններ, փաստաթղթերի ժողովածուներ, մենագրութիւններ եւ Հայոց Ցեղասպանութեանը նուիրում բազմաթիւ այլ գիտական աշխատութիւններ: Քաջ գիտակցելով Հայոց Ցեղասպանութեան իրադարձութիւնների բացայայտման գործում նաեւ ականատես-վերապրողների հաղորդած վկայութիւնների պատմագիտական դերն ու նշանակութիւնը, ստորեւ հրապարակում ենք Էրզրումի նահանգի, Էրզրում քաղաքի բնակիչ եւ Էրզրումից տեղահանուած հայութեան առաջին կարաւանի վերապրած Շուշանիկ Տիգրանեանի վկայութիւնները: Այն կը գայ լրացնելու այն սակաւ տեղեկութիւնները, որոնք մինչ

այժմ առկա են Էրզրումի առաջին կարաանի աքսորեալների վերաբերեալ: Վկայութիւնը ցարդ գիտական շրջանառութեան մէջ չի դրուել:

Էրզրումի (Կարնոյ) նահանգը Արեւմտեան Հայաստանի հայաշատ եւ տարածական մեծ ընդգրկում ունեցող նահանգներից էր: Ա. աշխարհամարտի նախօրեակին հայ բնակչութեան թիւը կազմում էր 250-260,000¹:

Նահանգում ընդհանուր քաղաքական իրավիճակը պատերազմի սկզբից եւեթ լարուած էր: Եոհաննէս Լեփսիուսի փոխանցած տեղեկութեան համաձայն՝ պատերազմը սկսուելու հետ մէկտեղ նահանգում սկսուեցին հայութիւնից ռազմական կարիքների համար բռնագանձումները: Հայերից կատարուած բռնագանձումները կազմում էին թուրքերից բռնագրաւուածի առնուազն կրկնապատիկը: Նահանգի հայերի խանութները վերջնականապէս կողոպտելուց յետոյ հերթը հասաւ նրանց տներին: Զէնք որոնելու պատրուակով խուզարկուեցին հայերի տները: Խուզարկութիւնները ուղեկցուած էին ձեռքակալութիւններով եւ անմարդկային չարչարանքներով²:

Կարնոյ դաշտի հայութեան զանգուածային տեղահանութիւնները սկսուեցին Մայիսի սկզբներին, իսկ Կարին քաղաքինը՝ Յունիսի սկզբներին, երբ գաւառի գիւղացիութեան տեղահանութեան ու ոչնչացման գործը իր աւարտին էր հասել: Առաջին երկու կարաաններ ընդգրկուեցին հարուստ վաճառականները: Անյայտ վերապրողի վկայութեան համաձայն կառավարութիւնը որոշել էր առաջին կարաանին տանել Երզնկայի ուղղութեամբ, սակայն առաջին կարաանում ընդգրկուած վաճառականների կամքին չհակառակուելու համար ընտրուեց Քոյի-Խարբերդ գիծը, քանի որ այնտեղ էլ կային հայերին ոչնչացնելու յարմար համապատասխան վայրեր³: Հենց այս առաջին կարաանի մէջ էլ ընդգրկուել է Շուշանիկ Տիգրանեանի ընտանիքը: Վերջինիս վկայութիւնը մէջբերում ենք ամբողջութեամբ առանց կրճատելու, անփոփոխ թողնելով շարադրանքի ոճը եւ ձեւը. աւելացրել ենք կէտադրական նշաններ եւ [] փակագծերով բառեր՝ աւելի դիւրամատչելի դարձնելու համար բնագիրը:

¹ Գեղամ Բադալեան, «Արեւմտեան Հայաստանի պատմաժողովրդագրական նկարագիրը Մեծ եղեռնի նախօրէին, մաս երրորդ. Էրզրումի նահանգի կենտրոնական ու արեւմտեան գաւառները եւ Էրզրում (Կարին) ու Երզնկա քաղաքները», *ՎԷՄ համահայկական հանդէս*, 4:2015, «Յաւելում», էջ 2. նաեւ՝ Ռ. Թաթոյեան, «Էրզրումի նահանգի հայ բնակչութեան թուաքանակը Մեծ եղեռնի նախօրեակին (աղբիւրների համեմատական վերլուծութեան փորձ)», *Ցեղասպանագիտական հանդէս*, 2(1):2014, Երեւան, էջ 54:

² Ե. Լեփսիուս, *Հայ ժողովրդի ջարդերը*, Անահիտ հրատ., Երեւան, 2003, էջ 35-37:

³ *Հայոց Ցեղասպանութիւնը Օսմանեան Թուրքիայում. Վերապրածների վկայութիւններ. փաստաթղթերի ժողովածու, հատոր III, Էրզրումի, Խարբերդի, Դիարբեքի, Սեբաստիայի, Տրապիզոնի նահանգները, Պարսկահայք*, գլխ. խմբ.՝ Ա. Վիրաբեան, Հայաստանի ազգային արխիւ, Երեւան, 2012, էջ 22:

Վկայութիւնն առկայ է ՀԲԸ Միութեան Փարիզի Նոպարեան Մատենադարանի Արամ Անտոնեանի ֆոնդի Էրզրումի թղթապանակում⁴: Ձեռագիրը բաականաչափ ընթեռնելի է, թէեւ առկայ պարբերութիւնները սակաւ են: Տիգրանեանը հետաքրքիր եւ կարեւոր տեղեկութիւններ է յայտնում Ա. կարաւանի մասին, մասնաւորապէս՝ յիշատակելով կարաւանին ուղեկցող պաշտօնեաներին, կարաւանի տեղահանման հիմնական ուղղութիւնները, կայանատեղիները, կոտորածի վայրերը, ինչպէս նաեւ քրտական խմբերի կողմից հայերի դէմ կատարած ոճրագործութիւնները: Հետաքրքիր եւ ուշագրաւ տեղեկութիւններ կան նաեւ մինչեւ Խարբերդ հասած առաջին կարաւանում վերապրած այլ կանանց, Խարբերդում նրանց իսլամացման, նրանց ճակատագրի, ինչպէս եւ հենց Շուշանիկի փրկուելու պատմութեան մասին:

[Վկայութիւն]

Յունիս Յին⁵, կառավարութիւնը 25 տուն զատելով Բալուցի ջորեպաններով Էրզրումէն ճամփայ հանեց մեզ, բայց չէինք գիտեր թէ ուր կ'երթանք: Առաջիկ[ն] օրը, որ պիտի էլլայինք, վալին լուր դրկած էր թէ, մինչ քաղաքին դուռը ոտքով թող երթան: Ամէն մարդ իր ընտանիքով, լալով, ողբալով, իր տունը տեղը ձգած կը մեկնէր: Հասանք քաղաքին դուռը 3 հատ վրան կար զարնուած մէջը անբարոյական տաճիկ կիներ, որոնք գէշ խօսքեր ընելով մէկիկ, մէկիկ սկսան մեզ խուզարկել, բացի այդ մարդոցմէ: Բնաւ բան մը չգտան, սկսանք ձիերը նստիլ եւ մեկնիլ, մեզ հետ տուած էին պաշտպանութեան համար 50 հատ ժանտարմաներ եւ մէկ զապիթ⁶, որուն անունն էր Նիւրթը: Առաջին օրը Թեքէ Տերէսի⁷ ըսուած տեղը իջանք, վրաններ զարկինք, ամէն տուն զինուորները սկսան բաժնել որ կերակրեն, չէինք գիտեր ինչ մտքի: Զապիթը ըսաւ՝ «ես Տիգրանեաններուն հետ միայն պիտի ճաշեմ, ամէն օր մեծ պատրաստութիւններ կար ասոնց համար»: Գիշեր եղաւ, ժամը 4ին ամէն մարդ պառկած էր, հրացանի ձայն լսուեցաւ, սկսան այդ մարդիկ հարցնել թէ ի՞նչ է: Զօրքերը պատասխանեցին՝ այստեսակ տեղերը միշտ զէնքեր կը պարպուին:

⁴ BNU/Fonds Andonian, P.J.1/3, liasse 59, Erzerum, թթ. 9-17, բնագիր, ձեռագիր:

⁵ Նոյն կարաւանում գտնուող Ատեյիսա Մազմանեանը եւս վկայում է թէ Էրզրումից առաջին կարաւանը շարժուել է Յունիսի Յին (ՀԱԱ, ֆ. 227, ց. 1, գ. 482, թթ 1):

⁶ Ոստիկանապետ, սպայ:

⁷ Գիւղ Արեւմտեան Հայաստանում, Էրզրումի նահանգի Էրզրումի գաւառում, Էրզրում քաղաքից հարաւ-արեւմուտք: 1888ին ունէր 138 բնակիչ (Թ. Խ. Յակոբեան, Ստեփան Տ. Մելիք-Բախշեան, Յ. Խ. Բարսեղեան, *Հայաստանի եւ յարակից շրջանների տեղանունների բառարան, հղր. 2*, Երեւանի պետական համալսարանի հրատ., Երեւան, 1988, էջ 427):

Առտու դարձեալ ճամփայ ելանք, տեղ-տեղ, քիւրտեր կը հանդիպէին, եւ իրենց [ժանտարմաներուն] հետ գաղտնի կը խօսէին: Այր մարդիկ զգացին, որ մեր գլխուն փորձանք կայ, միշտ մէկ վրանի մէջ ժողով կ'ընէին: Երրորդ օրը մեր զապիթը գիշերուան մինչ ժամը 5 կորսուեցաւ, այր մարդիկ հաւաքուեցան, սկսան խորհիլ թէ ուր կ'երթայ, մի գուցէ քիւրտերուն պիտի բերէ որ ջարդել տայ, իսկ կիներս սարսափելի լաց մը ձգած էինք, իսկ Թեֆիկ [ըսաւ] մեր թագաւորին հրամանը պիտի կատարուի: Յանկարծ մէկը պոռաց՝ Նիւրթէ պէյը եկաւ: [Ան] ուղղակի մեր վրանը իջաւ: Բարի եկար ըսին՝ նստեցաւ, օղի ուզեց, անմիջապէս երիտասարդները բերին, սկսաւ խմել: «Գիտէ՞ք,- ըսաւ,- գացի քիւրտերուն գիւղը գառ ուտելու, ինչեր անցաւ գլուխէս: Այսօր ձեզ պիտի սպանէին, հարսներ եւ աղջիկներ պիտի տանէին, բայց խրատեցի, ձեր պաշտպանութեան համար հետերնիս շատ զէնքեր առած ենք, բնաւ մի՛ վախնաք: Հիմա 600 լիրա հաւաքեցէք որ մեր ժանտարմաներուն մեծին Թեֆիկ չաւուշին տանք միւսներուն բաժնէ»: Դրամը հաւաքեցին տուին: Հասանք Ճեհեննէմ Տերէսի⁸, երկու քիւրտ - ձեռքերնին խենչել - տեսնուեցան: Մեր զապիթը բռնել տուաւ, ձեռքերնին կապելով սարսափելի ծեծեցին, ըսելով [թէ]՝ եկած են որ Տերսիմի քիւրտերուն լուր տան՝ գան ձեզ սպանեն: [Բայց] ամբողջ սուտ. զօրքերուն մէկը որ լազ էր, այր մարդոց գաղտուկ լուր տուաւ թէ, եկած էին որ ձեզ ըսէին, թէ առաջ մի՛ երթաք, լեռանը ետեւը Տերսիմն է, քիւրտերը գիշերով պիտի գան տանին ազատեն [ձեզ] անպիտանին ձեռքէն:

Գաթըրճիները⁹ կը պոռան՝ «մեր անասունները, այս մարդիքը մեռան անօթի, պէտք է իջնենք»: [Զապիթը] առանց պատասխան տալու շարունակել կու տար ճամփան: Տեղ մը եկանք որ հրաման ըրաւ կենալու: Հազիւ ձիերէն իջանք՝ «հոս դիրք չեմ կրնար բռնել» [ըսաւ], գաթըրճիներուն հետ կռուելէն վերջ նորէն շարունակել տուաւ ճամփաներս: Ինչ տեսանք՝ պոռալու ծայն մը՝ «չեթէները եկան»: Թեֆիկ եւ Հապիպ ոճրագործները ձիերուն հեծած սկսան երթալ, քիչ վերջ եկան ըսելով՝ «սուտ է»: Տափարակ տեղ մ'եկանք «իջէք,- պոռաց Նիւրթէը,- բայց վրան մի գարնէք»: Տեսանք որ մեր մէջէն ձերունի կին մը վիրաւորուած է: Հազիւ իրար լուր կու տայինք՝ հազարաւոր քիւրտեր մեր վրան յարձակեցան, ամբողջ ունեցածներս թալնեցին. ալ մեր գաթըրճիներն ալ գացին, մաս մ[ը] բաներ տանելով, բայց սպանութիւն չըրին: Բոլորս կը պոռայինք «Աստուած օգնէ մեզ»: Սարսափելի տեսարան. որը կը մարի, որ մէկը խենթի պէս կը վազէ: Նիւրթէը պոռաց՝ «զինուորներ, շրջապատեցէք ժողովուրդը եւ կեցէք»: Ամէն ոք մեռնելու պատրաստ, իր ընտանիքը առած կը սպասէր վերջին հրամանին: ½ ժամէն [զապիթը] ահռելի քիւրտ մը առած եկաւ, կանչեց այր մարդոց՝ «պէյը պիտի ձեզ իր

⁸Թըքերէն՝ դժոխքի ձոր, ենթադրաբար տարածք Էրզրումից դէպի Քոյի տանող ճանապարհին:

⁹Զորեպաններ:

գիւղը տանի, միայն 200 լիրա տուէք եւ թրքացէք»: «Մենք չենք թրքանար, եւ պատրաստ ենք մեռնելու» [ըսինք], ինչ դրամ որ ունէինք] հոտ ալ հաւաքեցինք] տոփնք]: Տարաւ իւր գիւղը որ շատ մօտ էր, Շող քէյ¹⁰ էր անունը: Լալով տղայոց ձեռքերէն բռնած կը վազէինք, տանիքները քիւրտեր հաւաքուած նաճախները¹¹ ձեռքերնին կը սպասէին: Պէյը կը պոռար՝ «իմ հողիս մէջ չեմ ուզեր արիւն թափել»: Յաճ մարագ մը լեցուցին մեզ, կովերուն աղտոտութիւններուն վրայ. դուռը գոցուեցաւ, մութ, անօթի, ծարաւ, պզտիկներուն ծայնը երկինք կ'ելլար: Մեր մէջ 3 մարդ գէնքերնին պահած էին՝ Անդրանիկ Տիգրանեան, Գառնիկ Տիգրանեան, Յարութիւն Սարաֆեան, կամաց մը իրար ըսին՝ «եկէք թաղենք, եթէ ասկէ ելլանք նորէն հանենք»: Գիշեր էր, քիւրտերը սկսան մարագին վրան թակել, եւ կը պոռային: Մեր ծառային հարցուցինք ի՞նչ կ'ըսեն: Ինքն ալ տղան մշեցի էր այսպէս կ'ըսեն ըսաւ՝ «հարսներ, աղջիկներ մեզ տուէք, այր մարդիկ, ծեր կիներ, տղայք պիտի մեռցունենք, մեր թագաւորին հրամանը աս է»: 2 ժամ միօրինակ պոռացին, միայն խրատող մը կար որ չէինք գիտեր ինչ կ'ըսէր, ժանտարմաներուն մէկն էր: Վերջապէս հեռացուցին, մենք արդէն կիսամեռ եղանք: Արշալոյսը կամաց-կամաց, կը բացուէր, երբ բոլորովին լուսացաւ, Նիւրէթը մարագին դուռը բացաւ, քիչ մը ջուր եւ հաց [տուաւ] քիւրտ կիներուն տուած[ը]. ոչ տղայք եւ ոչ մենք կերանք: «Գիտէ՞ք,- ըսաւ,- ինչ խորհած ենք, վերջին վայրկեաններդ է, ամէն մարդ իր կինը եւ զաւակնիրը առած պէտք է մարագին 2 կողմը կենաք, մեր զինուորները ներս գան, քիւրտերը դուրսէն մերինները ներսէն պատերազմին, որ կողմը որ յաղթող ելլայ այն կողմը ջարդ պիտի ըլլայ»: Ըսաւ եւ արագ դուրս ելաւ: Անմիջապէս այր մարդիկ գէնքերը հանեցին եւ ըսին՝ «կիներ, ձեզ ամէնուր չափ փամփուշտ ունինք մեռցունելու, տղայոցդ եւ ձեզ մեռցունենք՝ մի՛ անցնիք անոնց ձեռքը»: Հոս երեւակայել անկարելի է. կարծես թէ երագի մէջ էինք: Նոր [հագիւ թէ] վեր ադին գէնքերը, 12 չեթէ ձիերով կանգնեցան, մուշանպա¹² զգեստներ հագուած, կարծես մէյ-մէկ հրէշ, վախ, վախ, ինչ եղած են, ալ Նիւրէթը սկսաւ պատմել. տես որ 5 օր է որ լեռները իրարու հետ խորհուրդ կ'ընէին: Կերչէ Օղլու Ատիլ ըսուածը Մարտիրոս Տիգրանեանին էրգրումէն ճանչցած ըլլալով քովը կանչեց եւ ըսաւ, ուսին զարնելով՝ «կիներուն խօսք հասկցուր, կ'երդնում Ղուրանին վրայ, որ բան մը չընենք ձեզ, եթէ ասկէ դուրս ելլաք, թէեւ ձեր յեղափոխականները մեր վանեցիները ջարդած, կիներուն փորեւէն տղայքը հանած, կիներ եւ աղջիկներ անպատուած են. մենք հայ չենք որ անօրէն գործեր տեսնենք»: Մարտիրոսը պատասխանեց՝ «մենք արդէն

¹⁰ Նոյն կարաանում գտնուող մի շարք կանանց վկայութեան համաձայն գիւղի անունը Շէյխ էր. այն գտնում էր Դերսիմի լեռան ստորոտին (*Հայոց Տեղասպանութիւնը, հպր. III, էջ 46*): Մագմանեանը եւս յիշատակում է այդ վայրի մասին՝ նշելով հենց Շող (*ՀԱՍ, Գ. 227, Գ. 1, գ. 482, թթ 1-4*):

¹¹ Մի կողմը սուր բերանով, միւսը տափակ՝ կացնանման գործիք:

¹² Կերպընկալ:

մեռած կը համարուինք, ամէն բան տեսանք Ատիլ պէյ, Էրզրումէն կառավարութիւնը շատ խօսքեր ըսաւ մեզ, վալի պէյը 50 ժանտարմաներով հանեց մեզ, այսօր 5 օր է, 5000 տեսակ փորձանքի եկանք, եւ պիտի մեռնինք հայ անունով»:

[Ատիլը] առաւ զինքը 7 հոգի ալ ուրիշներ տարաւ, ըսելով «գառ ուտենք միասին վերջը ճամփայ ելլանք, մինչեւ Խարբերդ ապահով պիտի տանինք»: 1 ժամ չտեսեց, եկան «ելէք,- ըսին,- մենք պզտիկները կ'առնենք»: Այս ըսելով սկսանք երթալ՝ 12 չեթէները, ծիաւորները, զօրք հազարաւոր քիւրտեր ետեւներս ինկած, նմանապէս զապիթը, սկսանք լէռնէ մը վեր ելլալ, հասանք անտառ մը: Յանկարծ սուլելու ծայն մը լսուեցաւ, սկսաւ սպանութիւնը ամէնուս. մէկ-մէկ սկսան լաթերս հանել, մագերէն քաշել, ծեծել, գետինները ամբողջ դիակներով լեցուեցաւ: Նոյնիսկ կիները սուրերնին առած կը պողային «փարա, փարա¹³» եւ պզտիկ տղայք կը սպանէին: Ինծի որ բռնորովին մերկացուցած էին, դիակներուն մէջտեղ, ապշած նստած էի, եւ կամաց մը կ'ըսէի «այս ինչ եղանք տղայքս, ամուսինս, գտնամ, դիակները առնեմ»: Չորս կողմս նայեցայ, ոտքի ելայ, չկրցայ երթալ անչափ որ ծեծ կերած էի: Յանկարծ, ետեւս դարձայ որ մեր Նիսրէթը ապշած կը նայի: Ձեռքէս բռնեց, վեր հանեց, դիակները կոխելով այդ վիճակով գացի ետեւէն. ձոր մը տարաւ ինձ որ 2 կին կայ մեզմէ, զօրք մ'ալ քովերը: Կեցանք: Գնաց ինքը այս անգամ 5-6 վիրաւոր կիներ բերաւ, 2 պզտիկ աղջիկներ, մին իմ աղջիկս, իսկ միւսը՝ վիրաւոր քանի մը տեղէ: Նստած, առանց իրարու հետ բան մը խօսելու իրարու կը նայէինք եւ կը սպասէինք մեր սիրելիներուն: Մէյ մըն ալ ի՞նչ տեսնանք, չեթէ Ատիլը արիւնոտ սուրը բռնած, ճակատին արիւն քսած [ըսաւ]՝ «նեզեթէթի¹⁴ խանումներ, հիմա կառքերը պիտի գան որ երթաք», ինչ, ինչ, խօսքեր [ըրաւ]՝ «տղայքսդ կտոր-կտոր ըրինք, ամուսիններդ, ծերերը...» եւ միշտ Վանը կը կրկնէր ըսելով՝ «ծերիները շատ բաներ ըրեր են, քանի մը հատ ալ թողած ենք, ուրիշ տեսակ պիտի մեռցունենք», ըսաւ եւ հեռացաւ: Գարակիլեան Արմիկը երեւաց, մերկ՝ կուրծքերէն, վիրաւոր՝ թեւերէն, նստաւ քովերս, երկինքը, գետինը, մէկ սկսաւ ձեռքը երեսին դնել եւ երգել «վախ եարուկարըմ տաշլարա պրաքտըմ¹⁵»: Սարսափելի լացինք: Նայինք հեռուէն մերկ այր մարդ մը կու գայ, Վահան Տիգրանեան, սաստիկ վիրաւոր, կինը, վեց ամսու տղան արիւններու մէջ թաթխուած: Ասոնք – ինչպէս եղած է - միասին կը վիրաւորեն, կինը ամուսինին վրան կ'իյնայ, նայելով որ ողջ է, տղան ալ կը սկսի արիւններուն մէջ տապալիլ: Ալ կը տեսնան որ չորս կողմը լռութիւն տիրեց, իրարու բռնած, տղան առած եկան մեզ գտան: Նիսրէթը երեւաց, տեսաւ որ մերկ ենք՝ «չտեսնայի ձեզ այս վիճակին մէջ» [ըսաւ]: Մենք ըսինք՝ «ալ մեզ ալ սպաննէ, եւ կամ՝ թո՛ղ որ երթանք

¹³ Թրք.՝ փող:

¹⁴ Թրք.՝ քաղաքավարի:

¹⁵ Թրք.՝ վախ, երեխաներիս քարերին թողեցի:

մեր սիրելիներուն դիակներուն քով»: «Ոչ,- ըսաւ,- անկարելի բան է որ ձգեմ, քանի որ ձերինները 17 քիւրտ սպանած են, բոլորը դիակներուն մէջէն հանեցինք եւ հաշուեցինք, սպանողները ասոնք էին՝ Անդրանիկ Տիգրանեան, Գառնիկ Տիգրանեան, Յարութիւն Սարաֆեան շատ գէշ ըրին գիտցած ըլլաք, անոր համար ձեզ այսպէս ըրին»: Մենք ալ ըսինք՝ «շատ լաւ ըրին, լաւ որ ըսիր, իմացանք ականջներովս, չմեռած ատեն Յին քով գէնք կար»: Սկսաւ պոռալ՝ «հիմա պէտք է որ երթանք»: «Ու՛ր,- ըսինք,- ասպէս մերկ, վիրաւոր, ամօթ է գոնէ [բան մը հագուիւնք]»: Ըսաւ՝ «հիմա մօտ տեղ մը կայ հոս, ժանտարմա մը դրկած եմ որ ձեզ լաթեր բերէ»: Եւ իրօք [ժանտարման] եկաւ, մօտ գիւղերը մեռցուցած հայերուն արիւնոտ լաթերը բերին, անչափ որ ծածկուելու չափ առինք, վիրաւորները կապեցինք, Վահան Տիգրանեանին: Ինքը [Նիսարէթը] կեցաւ եւ ըսաւ՝ «պատուիս վրայ երդում [կ']ընեմ որ մինչեւ Խարբերդ քեզ ողջ տանիմ, քանի որ ձեր ընտանիքին մարդկութիւնը տեսայ: Առ սա կնոջ էնթերին¹⁶, հագուէ, սա լեչէկն ալ երեսդ ծածկէ, կիներուն քովէն գնայ: Ճամփայ պիտի ելլայինք ձայն մը կու գայ հեռուէն՝ «մայրիկ, մայրիկ»: Ախ արդեօք որո՞ւն տղան է: Մարդիկ պառկեցուցին որ մորթեն ինձ, 3 անգամ գետին զարկին, շատ աղաչեցի, մէջերնէն ձերունի քիւրտ մը ըսաւ՝ «մեղք է, ինձ տուէք»: «Ինչո՞ւ չսպանենք, կը մեծնայ (*կեատուր ուշադին*¹⁷) ինչեր կ'ընէ»: Վերջապէս այդ մարդը կ'առնէ տղան, կը սկսի երթալ: Տղան [տեսնելով դիակը], կ'ըսէ՝ հայրիկին դիակը, կը կենայ դիտելու, մարդուն սիրտը գուօ կ'իյնայ, տղուն կ'ըսէ՝ «հոս ձորին մէջ կիներ կան վագէ, կարելի է մայրդ գտնաս»... այսպէս բոլորովին մերկ եկաւ: Սկսանք կամաց-կամաց հեռանալ սիրելիներէ: Տեսանք ձիու վրայ նստած ահռելի քիւրտ պէյ մը սկսաւ Նիսարէթին բարկանալ՝ «Աստուծմէ վախցի՛ր, ինչո՞ւ ասանկ ըրիր աս ընտանիքները, եթէ մեր կիները ըլլային ասոնց տեղ, ի՞նչ պիտի ընէին: Գիտցած ըլլաք որ մենք աւելի գէշ պիտի ըլլանք»: [Ան] առաջ ինկաւ, ըսաւ՝ «[Խոս եայլա՞ւ¹⁸ մը կայ հոն տանինք]»: 1/2 ժամէն գացինք, ալ մեռնելու աստիճան [յոգնած]՝ հասանք: Պզտիկ խրճիթ մը կար, մեզ նստեցուց, 3 քիւրտ կիներ թան կ'ընէին, որ մեզ բերեն, տեսանք՝ եկան կայթը եւ թանը բերին, լալով-ողբալով բերաններս կը լեցունէին: Գիշերը հոս անցուցինք, առտու ելաւ նորէն նոյն պէյը վիրաւորներուն վերքերը լուալ տուաւ, հաց բերաւ, ամէնուն չարուիս տուաւ հագուեցանք, 10 հատ էշ բերաւ, վիրաւորները վրան կապեցինք, սկսանք - առաջուան դիրքով - ժանտարմաները եւ զապիթը հետերնիս երթալ: Քիւրտերը լեռներէն կը պոռային, կեցուցէք որ սպանենք: Ասոնք կը պատասխանէին՝ «ասոնց բոլորը սպանեցինք, դիտմամբ կը տանինք Բալու, սպասեցէք երկրորդ քերւէնին: Հասանք գիւղ

¹⁶ Երկար՝ մինչեւ ոտքերը հասնող, լայն արեւելեան վերնագգեստ, որը հագնում են թէ՛ կանայք, թէ՛ տղամարդիկ:

¹⁷ Թրք.՝ անհաւատի զուակ:

¹⁸ Թրք.՝ սարահարթ:

մը, նստեցուցին մեզ, քիւրտ մը եւ իւր տղան եկան, ըսին՝ աղջիկ մը տուէք մեզ: Նիւրթըը պատասխանեց՝ «3 աղջիկ չեթէները առին»: Եւ իրաւ է՝ Նուարդ Խարանկիւեան, Մայրանուշ Օհանեան, Վարդանուշ Մազմանեան [տարուեր էին]: Մայրանուշ Օհանեան որ հիմա Տիարպեքիի գիւղերն է չեթէ Զիային քով, իսկ միւսները չեմ գիտեր: Նիւրթըը դարձեալ կրկնեց պոռալով՝ «դուն քու աղջիկդ բեր ինձ, ես ալ տամ»: Հայրը ըսաւ տղուն՝ վիրաւորներուն վերքերուն նայիմ: Սկսաւ լուալ եւ կապել: Գիշերը անցաւ հողերուն վրայ, առտու մեզ ճամփայ հանեցին, կէս ճամփայ [հագիւ գացած] 3 վիրաւորներ թողուցինք եւ հեռացանք: Հողաս¹⁹ անունով հայրու գիւղ մը հասանք, հայ կիներ դուրս ելան եւ կ'ըսէին [թէ] ասոնց բոլորովին սպանած են: Կեցուցին մեզ շէնքի մ'առաջ, այր մարդ բնաւ չկար: Ծեր կին մը մօտեցաւ՝ «հարսներս ինչ էք եղած»: Կամաց մը ըսինք «սպանեցին մեզ»: «Ըսել է երէկ որ մեր այր մարդիկ տարին թէ ճամփաները պիտի շինեն՝ սպանելու տարին», լալով հեռացաւ: 1/2 ժամէն 3 հատ կին առած հաց, մածուն, հաւ եկան՝ շատ աղաչեցին [եւ] զապիթը թողուց: Ատոնք մեզ բերին, ալ սկան պատմել տալ: Լացինք շատ, իրենց թաշկինակները տուին որ վիրաւորները կապենք:


Առաւօտ նորէն սկսանք երթալ, մօտեցանք Բալուի գիւղ մը, եկանք որ մարդ չկայ բնաւ, դուռերը բաց, դիակները՝ լեցուն: Հոտ զգացինք որ միայն մեզ չէ որ սպանած են, [այլ՝] ամբողջ հայութեան է:

Մեզ մեծ թուրքի պարտէզ մը կար [հոն] նստեցուցին: Զապիթը կանչեց Հապիպը, ըսաւ՝ «[առաջ կ'անցնիս, Բալու կ'երթաս, ասոնց մէկուն առանց բան մը ընելու, կու գաք», ըսաւ եւ հեռացաւ: Նստած իրարու հետ կամաց մը խօսելով կու լայինք, ծառին վրայ տեսանք 25 տարեկան երիտասարդ մը, խիտ տեղ մը նստած է: Դիտելէն չորս կողմը վար իջաւ, [պատմեց թէ «]երէկ ամբողջ գիւղը, մեծով-պզտիկով սպանեցին, աս մօտ տունը մերն է, եւ այս դիակները մերիններն են, ես ալ փախայ ծառը ելայ, հոս [մեր] մէջ տաճիկ բնակիչ չկայ, ամբողջս հայ էինք»: Մեզ տանող զօրքերէն մէկը եկաւ, փանթալոն²⁰ մը ձեռքը եւ տուաւ ինձ թէ կարէ՛ պատռած է, թէ եւ ասեղ ալ տուաւ, ամբողջը արին էր, դիակներէն առած էր: Աստուած իմ, ինչպէս կարեմ, ինչ ընեմ, լալով հագիւ լմնցայ: Եկաւ [զինուորը տաքատը] առնելու, տեսաւ երիտասարդը, գնաց մեր էշերուն տէրերուն, որ 6 հատ էին, դրկեց եկան քաշեցին տղան, մենք ալ սկսանք մագերս քաշել եւ պոռալ, լալ: [Տղան] զարկին գետին, մորթեցին զինքը, սկսաւ տապալիլ, արիւնոտ

¹⁹ Գիւղ Արեւմտեան Հայաստանում, Էրզրումի նահանգի Քոլի գաւառակում, Քոլի գիւղաքաղաքից մօտ 10 կմ. հր.-արմ., տափարակ գեղահովտի ծայրամասում: 20րդ դարի սկզբին ուներ 150 տուն՝ 995 հայ բնակչով եւ թուրքական 15 տուն՝ 70 բնակչով (Յակոբեան, Մելիք-Բախշեան, Բարսեղեան, *Հայաստանի, հյրք. 3*, Երեւանի պետական համալսարանի հրատ., Երեւան, 1991, էջ 427):

²⁰ Տաքատ:

սուրերնին առաժ պար բռնեցին, ըսելով՝ «կզլար, կելինլեր, հազր օլունուզ²¹»։ Մենք ոտքի ելանք եւ պոռացինք։ Հապիպ չաուշը քնացեր էր, արթնցաւ եւ հեռուէն պոռաց՝ [«]ինչ կայ[»], եկաւ տեսաւ դիակ մը, ան գիտցաւ թէ Վահանն է, ըսաւ՝ [«]ես զհապիթին ի՞նչ պիտի պատասխանեմ,- մեզ կամաց մը ըսաւ,- ասոնք ծեր մէջ այր մարդ ողջ ըլլալը չգիտեն, աս ո՞վ է»։ Պատմե-



Էրզրում. համայնապատկեր (Գեղունի, 1-10:1903, Բ. Տարի՝ Յուշամադեան կայքէջ, www.houshamadyan.org)

ցինք։ Այս դիակը վերցուցին, շուները եկան տարին։ Այր մարդը [«]ելէք[»] ըսաւ, սկսանք լալով հեռանալ ատկէ։ 10ին Բալու եկանք։ Մէկը եկաւ ըսաւ՝ [«]ասոնք ջուրին եզերքը կեցուցէք, որ քայմաքամ պէյը ինչ որ հրամայէ ան ըլլայ[»]։ Մուրատ²² գետը անչափ տխուր տեսարան ունէր որ, ամբողջ դիակով լեցուն, կարծես լեռները կու լային, 1000[աւոր] դիակներ ալ ջուրէն դուրս ելած էին, իսկ մենք կը դողայինք, մէկ կողմէն ալ կ'ուրախանայինք, թէ ջուրը նետուինք պիտի։ Նորէն մէկը եկաւ, պոռաց՝ [«]քեֆիրներուն ինչո՞ւ սպասել կու տաք, ջուրը նետեցէք»։ Հապիպը պոռաց՝ «մինչեւ որ մեր զապիթը չգայ չենք ըներ»։ Մեր վիրաւորները եւ մենք գետին ինկանք հողերուն վրայ։ Զապիթը եկաւ եւ ըսաւ, [«]քայմաքամին հրամանը աս է որ ջուրը նետուիք, բայց ինձմէ լսեց թէ ինչ ընտանիքներ էք, նաեւ Անդրանիկ Տիգրանեան[ը] Պոլիս տեսած էր եւ զինքն ալ շատ լաւ կը ճանչնար, [հետեւաբար] Բալու պիտի մնաք, 3 օր հանգստանաք։ Քալեցէք»։ Տարաւ [մեզ] քաղաքին մէջ տան մը քով կեցուց, [ըսաւ՝] «սա տունէն ներս մտէք»։ Մեծ դիակ մը

²¹ Աղջիկներ, հարսներ պատրաստ եղէք։

²² Արեւելեան Եփրատ, Արածանի։


կոխելով ներս մտանք, ատիկա տանը տէրն է եղեր, իրենք շատ հարուստ են եղեր, սենեակներ կար նստեցանք: Ժամը 1 կար, ըսին՝ քայմաքամը եկաւ, տեսանք [ը] որ մեր զապիթին հետ ահռելի գազան մը եկաւ, չորսկողմը դիտեց, դարձաւ՝ «Տիգրանեանները ոտքի թող ելլան»: Վահանը երեսի վրայ պառկած մնաց, մենք 3 կիներ եւ 2 պզտիկ աղջիկներ, [եւ] Պետրոսը՝ կեցանք, բնաւ չըսինք թէ այդ մարդ ունինք: [«]Գիտէք,- ըսաւ,- ես Անդրանիկ էֆ.ին Պոլսէն կը ճանչնամ եւ պատիւն ալ շատ տեսած եմ, մեղք որ ասանկ եղաք, ես ձեզ չեմ սպանել տար, նաեւ միւս կիներուն[«]: Եղաւ երկրորդ օրը, աս մարդը եկաւ, բերելով հետը մեզ կերակուր եւ հաց, քիչ մը վերջը երկու իմամներ դրկած էր, թէ իրենց աղջիկ պէտք է տանք, ես գացի եւ պատասխանեցի՝ «մենք մեռած ենք արդէն աղջիկ չունինք տալու, ինչ կ'ուզէք ըսէք»: Մտածեցին եւ հեռացան:

Նորէն ճամփայ հանեցին մեզ դէպի Խարբերդ, շատ նեղութիւն տալով ճանապարհները, հասանք Հիւսէյնիկ²³ ըսուած գիւղաքաղաքը, տեսանք որ պատուհաններէն այդ մարդիկ, կիներ, գլուխներնին կը զարնէին եւ կ'ըսէին՝ «վախ, ուրկէ կու գաք». մենք ալ 1, 2 անգամներ ըսինք մի երեւաք, սկսան մեզ զարնել թէ ինչ կ'ըսէք, եւ արդէն շուկաներուն մէջ իրենց գոյքերը սկսած էին ծախել: Բաւական այդ գիւղէն հեռացանք, Խարբերդը տեսնուեցաւ, հազիւ մօտեցած էինք հիւանդանոց մը տեսանք որ[ուն] պատուհաններէն հայ երիտասարդներ սկսած էին մեզ դիտել: Ատոնց մէջ էրզրումցի երիտասարդ մը կայ եղեր, երբ մեզ տեսաւ, միւսներուն կ'ըսէ [«]Եսոնք բարձր տուններու ընտանիքներ էին, աս ինչ են եղած, մենք ալ ուրեմն պիտի մեռնինք, բան մը կայ[«]: Տանելով մեզ դարձեալ կեցուցին մէջտեղ մը: 2 ամերիկացի աղջիկներ կեցած կ'ըսէին, հաւատքներդ չուրանաք՝ եւ կը զարմանային մեր վրաները դիտելով: Տարի Մուալիմ²⁴ ըսուած շէնք մը [եցուցին մեզ, Մեզրէէն քիչ մ'հեռու: Հոտ մեր [պահակորդ] զինուորները ալ գացին, զապիթը բնաւ չտեսանք, ուրիշ զօրքեր զէնքերնին բաց կեցան, հոտ բանտարկուեցանք: Գիշերուան ժամը 3ին մեր սենեկին դուռը զարնուեցաւ՝ բացինք, Նիսրէթը եւ զապիթ մը: Մեր զապիթը այդ մարդուն ըսած էր թէ այդ մարդ մը կայ ասոնց մէջ, բայց դուն բնաւ գիտցած մ'ըլլար: Այս մարդը միւսներուն նայելով (բաղդատմամբ – Ա.Կ.) բաւական լաւ մարդ մըն էր, ըսաւ՝ [«]Եսկէ վերջ դուք ինծի յանձնուեցաք, եկայ պէյին հետ որ վիրաւորները զատեմ: Հիմա կառքերը կու գան, բայց ես կ'ուզեմ որ ձեր մէջի աղջիկներն ալ տանիմ եւ հարսները: 2-3 հատ ալ կին, որպէսզի ձեզ որ ասկէ դրկեն, ըսեմ թէ 25 օր տուէք գոնէ, վիրաւորները եւ հիւանդները առողջանան[«]: Անմիջապէս ամէնը

²³ Գիւղ Արեւմտեան Հայաստանի Խարբերդի նահանգի Խարբերդ գաւառում, Խարբերդ քաղաքի մօտ: Խարբերդի նահանգի երկրորդ հայաշատ բնակավայրն էր: 1914ին ունէր 4500 հայ բնակիչ (Յակոբեան, Մելիք-Բախշեան, Բարսեղեան, *հղր.* 3, էջ 421):

²⁴ Արաբ.՝ ուսուցչանոց (մանկավարժական համալսարան):

տարաւ: Առտու եղաւ, կառավարութեան կողմէ հաց բերուաւ մեզ: Նորէն այդ մարդը դեղագործ մը առած եկաւ, իրեն հետ բերած էր կարգ մը դեղեր, նայեցաւ, տուաւ, քիչ վերջը ամերիկացի 2 օրիորդներ զգեստներ եւ ուտելիքներ առած եկան, բայց չթողուցին իրենց, ըսելով թէ արգիլուած է, անոնք լապիսկները շատ խօսքերով եկան մեզ բաժնեցին, ուտելիքներն ալ իրենք առին:



Հատուած ձեռագրից

3[րդ] օրը սկսան խարբերդի հայերու ճամփայ հանելները, բայց, Պսակ վարդապետը եւ քանի մը հոգիներ առաջուրնէ ղրկած են եղեր: Պատու-

հաններէն կը դիտէինք, կու լայինք թէ պիտի ասոնք ալ մեռնին, բայց առանց գիտնալու կը մեկնին: 1 օր, նայինք՝ դաշտը հարիւրաւոր մարդիկ կ'երեւին, մէկը չկայ որ լսենք: Վերջը դռնապան զինուորներուն հարցուցինք, ի՞նչ են: Պատասխանեց սվազցիներ են: Մէջերնին այր մարդ բնաւ չկար, սպանած էին: Եկրորդ օրը ասոնք բնաւ չկային. որկեցին: Ալ ամէն օր զինուորականներ կու գային եւ կը պոռային՝ աղջիկ եւ հարս տուէք: Մեծ կիները կը պատասխանէին՝ չկայ: Տեսան[ք] որ այս ա'լ չի քաշուիր, ելան[ք] այդ մեզ որ իրեն յանձնած էին՝ այդ զինուորականին լուր տուին[ք], անմիջապէս արգիլել տուաւ, թէ՛ ասոնք կառավարութեան հրամանաւ բանտարկուած են, մեզ առաջարկեց թէ՛ [«]դուք պէտք է տաճիկ ըլլաք, նաեւ Վահանը որ կարենամ ձեզ պաշտպանել, եթէ ոչ՝ ձեր աղջիկներն ալ, հարսներն ալ կ'առնեն[«]: Ալ խորհեցանք ի՞նչ ընենք, ըսինք մեզ Մեզրէ²⁵ իջ[եց]ուր, տուն բռնէ, անկէ, վերջ: [«]Կ'ըլլայ,- ըսաւ,- միայն Վահանին ողջ ըլլալը չպիտի իմանան, եթէ ոչ՝ կը մեռցնեն[«]: Եկրորդ օրը մնացած կիները եւ մենք գացինք Մեզրէ: Ամէն օր տաճիկ կիներ սկսան մեր տունը գալ տղայ, աղջիկ, կին ուզել, բայց կ'ըսէինք, մենք չենք գիտեր, Մեմէտ էֆ. գիտէ, եւ իր քով կ'երթային: 40 օր մնալէ վերջ, օր մը դուռը զարնուեցաւ [«]ո՞վ է ըսինք[«]: Տաճիկերէն պատասխանեցին՝ փոլիսներ էին, [«]բացէք, չէնէ դուռը կը կոտրենք[«]: Բացինք դուռը, ներս մտան, Վահան Տիգրանեան[ը], որ տոլապին²⁶ մէջ պահեցինք, խուզարկեցին գտան, տարին բանտարկեցին: Այն ժամանակն է որ Խարբերդի մէջ 900 հայ օրուան մէջ կը բանտարկեն, գիշերը լեռը կը հանեն կը սպանեն: Կու լայինք, կ'ողբայինք, ճար չկար: Գիշեր մ'ալ, բանտը [որ] մեզ մօտ էր սկսաւ վառիլ, իրենց մէջ մեծ իրարանցում մը եղաւ, կը պոռային՝ [«]Ֆետէիները բանտը վառեցին, ելէք եւ հայերը սպանեցէք[«]: Ինչ սարսափելի վայրկեան: Առտու եղաւ, Մեմէտ էֆ. եկաւ եւ ըսաւ [«]պատրաստուեցէք որովհետեւ կ'ուզեն ձեզ ճամփել, ես պիտի աշխատիմ որ չձգեմ[«]: [«]Ի՞նչ եղաւ Վահանը,- ըսինք,- ի՞նչու բանտարկեցին[«]: [Պատասխանեց՝ [«]որովհետեւ այր մարդ է[«]: [Մենք ալ ըսինք՝] «հատէ միասին երթանք մեռնինք»: Առանց պատասխան տալու մեկնեցաւ: Անմիջապէս ելանք բանտ գացինք բոպիկ ոտքերով, գլուխներս բաց, գացինք որ, ամբողջ դիակներ, 20 հատի չափ վառած, բանտին ալ՝ մէկ կողմը: Ասոնք հայ յեղափոխականներ են եղած, տեղացի, [«]լաւ է,- ըսեր են,- ասոնց ձեռքով չմեռնիլ, կրակ ձգենք եւ վառինք[«]: Տեսանք որ Վահանը կարծես կիսամեռ եղած էր, մեզ տեսնելուն պէս սկսաւ երեսներս նայիլ, մենք ալ դռնապանին կ'աղաչենք՝ [«]դուն գիտես, թող ներս երթանք, 2 վայրկեան խօսինք[«]: Վերջապէս թողուց ալ: Վահանը բոլորովին ինքզինքը կորսնցուցած, յուսա-

²⁵ Քաղաք (աւան, գիւղ) Արմ. Հայաստանի Խարբերդի նահանգի Խարբերդի դաշտում, Խարբերդ քաղաքից 5 կմ. հր.-արեւմուտք: Այժմ թուրքերն անուանում են Էլազըզ (Յակոբեան, Մելիք-Բախշեան, Բարսեղեան, *հղր.* 3, էջ 754):

²⁶ Թրք.՝ պահարան:

հատած էր, ըսավ՝ «յմեզ եւ մեկնաճներուն այս երեկոյ պիտի տանին մեռ-
ցնելու, դուք ալ կրնաք, թոյն առէք եւ կերէք, ասոնց ձեռքը մի մնաք, երթաք
բարով, վերջի տեսութիւններս է»]:

Համբուրեցինք զինք եւ հեռացանք, լալով տուն գացինք, ուր հիւանդանոցէն
տաճիկ մ'եկած է[ր] թէ, տեղոյս միրալայ²⁷ Մեմէտ Ալի պէյ, հիւանդանոց այ-
ցելած է, [եւ հարցուցած՝ «]այս ընտանիքներէն Տէր Ազատեաններու աղջի-
կը կայ եղեր Կարապետ էֆ.ի ուր է]: Մերիններն ալ ըսած են որ տունն է:
[«]Գացէք եւ հիմա բերէք[» ըսած է]: [«]Ես եմ» ըսի, առին տարին [զիս]:
Աստուած իմ, ի՞նչ պիտի ըլլայ: Գացի տեսնուեցայ. «աղջիկս,- հարցուց,-
ձեր ընտանիքը, հայրդ ի՞նչ եղաւ»: Պատմեցի իրեն թէ, անոնք, եկրորդ
պարխանա²⁸ պիտի ելլային, մինչ հանեցին՝ սպանեցին, ահաւասիկ, մեր
քաղաքացիք եւ մեր ընտանիքը հոս են վիրաւոր, միայն ամուսինիս քրոջը
տղան, վիրաւոր բանտն է, եկան տուն[էն] տարին զինքը: Անունը որ տուի՝
[«]կը ճանչնամ զինքը[-ըսաւ:] Քանի որ հայրդ իմ ամենասիրելի բարե-
կամս է, եւ ես այս տեղի հրամանատարն եմ, խօսք կու տամ, որ ձեր, այ-
սինքն՝ Տիգրանեան ընտանիքը եւ միաները հոս թողում, քանի ողջ եմ»]:
«Պէյ,- ըսի,- բանտարկեալներն ի՞նչ պիտի ըլլան»: Հիմակուհիմա խօսք չեմ
տար հանելու, միայն կ'ապսպրեմ, բանտին միտիւրին, որ զինքը չսպանեն,
մինչեւ ինծմէ տեղեկութիւն չառնեն»: Եւ ճիշտ ատանկ ըրաւ: Եկրորդ օրը
գիշերուան ժամը 1ին, զինուոր մը եկաւ, ինձ եւ իմ ներոջս տարաւ: Գացինք,
որ Սուլէյման Ֆայրք փաշան, որ հիմա Պոլիս կը գտնուի, [եւ] ինքը նստած
են: Հոտ նստեցանք: Ֆայրք փաշան ըսաւ. «մատամներ, պէյը ինծի խօսած
է ձեր ընտանիքին մասին, ամէն ինչ ձեզ չպիտի խնայենք»: Մենք ըսինք՝
«մեր ընտանիքէն բանտարկուած մէկը ունինք»: [«]Հիմա բան մը չենք
կրնար ընել,[- ըսաւ,-] մինակ կը պահենք զինքը եւ չենք թողուր որ սպանեն,
անանկ հրաման մը ունինք ձեռքերնիս Պոլսէն որ, մէկ հայ աշխարհի մէջ
չպիտի թողունք»: Մենք ալ ըսինք՝ «ուրեմն մեզ ինչու՞ թողուցիք»: [Պատաս-
խանեց թէ՝ «]ատ ալ խորհուած է, որովհետեւ մեր կիները բնաւ բան մը չեն
գիտեր, պէտք է հայ կիներ առնենք, որպէսզի մեր ընտանեկան կեանքեր-
նիս փոխուի[»]: «Փաշա,- ըսինք,- եթէ հայը գէշ է, ի՞նչպէս կ'ըլլայ»: Չպա-
տասխանեց, ելանք գացինք: Երկրորդ օրը ժամը 11ին, նորէն մեզ կանչե-
ցին: Մենք հասկցանք թէ մեր գլխուն գալիք կայ, գացինք: Սկսան ըսել՝
«ձեզմէ աղջիկ մը մեր պզտիկ մանչերուն կու տաք, նիքահ²⁹ կ'ընենք, պան-
քաներէն դրամներդ կը հանենք, ձեր այր մարդն ալ կը հանենք, եթէ ոչ՝ մե-
ռած էք ամէնքդ ալ»: Մտածեցինք, իրարու երես նայեցանք, ըսինք՝ «վաղը
լուր կու տանք[»]: [«]Լաւ[»] ըսին: Ելանք տուն գացինք, եղածը սկսանք
պատմել: Կատարեալ մեզ համար մահ էր, երբ ըսինք՝ աղջիկներս որ 12

²⁷ Գնդապետ:

²⁸ Պարսկ.՝ կարաւան:

²⁹ Թրք.՝ պսակ, ամուսնութիւն:

տարեկան էին, սկսան լալ եւ ըսել՝ «յթունաւորեցէք մեզ, աս ինչ խօսքեր են, մեր հայրիկները մեռցուցին, մեզ իրենց կու տաք»: Լուսցաւ լացով [եւ] մտածելով: Խորհեցանք թէ, անպատճառ բանտը երթանք եւ Վահանին ըսենք: Գացինք խօսեցանք, պարոն Շահպազն ալ Պոլսէն դրկած էին, որ հոտ սպանեն, տեսաւ որ այդ տեսակ բան մը կը խօսինք, լացաւ եւ ըսաւ. «տիկիններ հայերու այս օրը չտեսնէի»: Սկսաւ լալ, Վահանը սկսաւ խորհիլ եւ ըսել՝ «պարոն Շահպազ, ի՞նչ ընեն, քանի որ, մանչերնին, 11 տարեկան են, աղջիկներն ալ նոյնպէս թող ըսեն կու տանք. երկու ճամփայ՝ կամ մեռնիլ եւ կամ տանելու է այս ցաւերը մինչեւ վերջ: Եթէ ասոնցմէ մէկը ողջ մնան, ապագային [թող] պատմեն մեր հայ ազգին տառապանքները»: Լալով, լալով հեռացանք: Ճիշտ նոյն ժամուն դարձեալ կանչեցին մեզ, եւ՝ «ի՞նչ ըրիք, ի՞նչ պատասխան [տուիք]» [հարցուցին]: «Ի՞նչ ընենք դուք ինչպէս կը հրամայէք թող ըլլայ» [ըսինք]: «Գացէք դուք ամէնքդ ալ պատրաստուեցէք վաղը ամէնքդ միասին քանոն [ոստիկան] մը կը դրկենք թրքանալու եկէք» [ըսին]: Երկրորդ օրը նստած [էինք] ամէնքս, յանկարծ դուռը զարնուեցաւ եւ ահա երեւեցան 2 սարսափելի քանոններ: «Ելէք, որպէսզի բուն օրէնքը ընդունիք, որ ասկէ վերջ մարդու պէս ապրիք[»], առան լալով տարին մեզ հոտ որպէս թէ տաճկացուցին: Հոտ կանգնած կային 200ի չափ աղջիկներ, կիներ եւ տաճիկ այդ մարդիկ, ամէնը կը զատէին մէկ հատ կ'առնէին, ներս կ'երթային մէկ-մէկ թուղթ ձեռքերնին, կին ըրած նիքահ կտրած կը տանէին: Ինչ սարսափելի տեսարան: Մեզ հետեւող զինուորը [մեր մասին] ըսաւ՝ «ասոնք փաշաներուն խնամիններն են»: Առաջ անցուցին, ահռելի կրօնական մը նստած, իրեն արքանեակներով, շիւքիւր բառը միշտ կրկնելով, ըսաւ երկար-բարակ խօսքեր, իսկ մենք ապշած իրարու կը նայէինք: Որպէս թէ թրքացուցին, ելանք տուն գացինք: Իրիկուն եղաւ, իրենք եկան սկսան տաճկերէն անուններ տալ մեզ եւ ըսել՝ «հայերէն մէկ բառ չպիտի խօսիք, ձեր աղջիկներուն նիքահը վաղը պիտի կտրուի, Սուլէման Ֆայլը փաշային տղան արդէն Պոլիս վարժարանն է, իսկ միրալայ Մեմէտ Ալիին տղան 10 տարեկան, քովերնիս է: Ատոնք բոլորը իրենց խելքով կարգադրելէն վերջ դարձաւ՝ «ես դրամ չունիմ, 50 ոսկի տուէք, որ ձեր փեսան Պոլիս վարժարան դրկեմ» [ըսաւ]: «Պէյ,- ըսինք,- հիմա մենք մերկ ենք թալնուած»: «Օհ, ես պանքան հարցուցած եմ դուք դրամ ունիք, եւ 2 օր միջոց ձեզ, գացէք գանձեցէք եւ բերէք»: Աստուած իմ ուր դիմենք, ի՞նչ ընենք: Գացինք պանքան: Տիրեքթօրը հայ կաթօլիկ էր: Երբ մեր վիճակը տեսաւ զարմացաւ եւ ըսաւ. «երէկ եկաւ միրալայ մը, նայիլ տուաւ որ դրամ ունի՞ք, եւ ես հասկնալով խնդիրը՝ մենք մինչեւ Պոլսոյ պանքայէն տեղեկութիւն չառնենք, այս դրամները բնաւ չեն վճարուիր [ըսինք]: Ըսէք՝ ի՞նչ կ'ուզեն»: Պատմեցինք մեր գլխէն անցածը, եւ յանկարծ չար մարդու մը ձեռք իյնալը: «Օհ,- ըսաւ,- ամբողջ քաղաքը իր եւ այդ փաշային ձեռքն է, ամբողջ հայերուն Խարբերդի բանտը լցնելով սպանել տուին եւ 1000[աւոր] լիրաներու տէր եղան, մենք ալ իբր պաշտօնեայ հոս ենք, կարելի է մեռցնելու տանին մեզ վաղը կամ

քանի մը օրէն»։ Իսկ երկրորդ տիրեքթորը, որ եահուտի էր, դարձաւ մեր արտասուքները սրբելով [ըսաւ]՝ «դուք միք հոգ ընէր, դրամը կու տանք որ չըլլայ ձեզ սպանեն, գացէք եւ ըսէք իրեն, սպասէ պէյ 15 օր, Պոլսէն պանքա-³⁰ յի միջոցով բերել տանք»։ Գացինք [ըսինք]՝ «լաւ, դուք գիտէք», ըսաւ սերթ³⁰ խօսելով։ 15 օր վերջ 2 ներերս պանքան գացինք, 50 ոսկի վճարեցին, տա-
րինք մեր որբերը մերկ, անօթի թողլով, անիծելով տուինք։ [Պէյը] ինչ ուրա-
խութիւն ունեցաւ, տղան կանչեց՝ «տես,- ըսաւ,- քեզի համար է»։ Ընտանի-
քով ուրախացան, հոտ ըսաւ՝ «վաղուանէ սկսեալ ամբողջ էրգրումցիներուդ
օրական հաց կապել տամ կառավարութեան կողմէ»..., գիտէ թէ անօթի կը
մեռնինք։ Սկսան տալ. 50 լիրայի փոխարէնն է։

Այս անցաւ 1 ամիս, Խարբերդը արդէն պարպուեցաւ. տանելով բոլորը մեռ-
ցուցին։ Օր մըն ալ փախանք գացինք ամերիկեան քոնսիլա։ Մարդը շատ
լաւ ընդունելութիւն ըրաւ, շատ խօսելէն վերջ «միտի քոնսիլ ի՞նչ պիտի ը-
նենք, ճամփայ մը ցոյց տուր» [ըսինք]։ [Ըսաւ՝ «]քալած օրերնէդ իվեր կը
խորհինք, թէ այս կիները ազատենք։ Անչափ ատենը գէշ է որ նոյնիսկ մենք
վտանգի տակ ենք, աւելի լաւ է, Մեմէտ Ալին, միրայլայ[ը] եւ փաշան երկրին
Աստուած է, ձեզմէ կ'աղաչեմ որ լաւ վարուիք, քանի որ Վահանն ալ բանտն
է»։ Շատ խօսելէն վերջ ըսաւ. «ես [կը] գանգատիմ, հակառակ պարագա-
յին՝ փախէք հոս»։ Ելանք տուն գացինք։ Տէրը եկաւ, սկսաւ խօսիլ եւ ըսաւ՝
«թէեւ ցաւալի բայց ինչ ընենք, Պոլսէն հեռագիր առինք, որ Էնվեր եւ Թա-
լաթ փաշաները հրաման կ'ընեն, 1 հայ պահողը կախաղան պիտի ելլայ։
Ինչ ընելիքներս չենք գիտեր, տուէք ինձ 175 լիրա չէնէ, մեր հարսնացուները
ետ կ'առնենք եւ ձեզ կը ղրկենք մեռցնելու», ըսաւ եւ մեկնեցաւ, ետ դարձաւ
կրկնեց՝ «լացը օգուտ չունի, Վահանն ալ բանտէն կը ղկրեն[ք], մեկնեցէք»։
Շունչերնիս կտրած քոնսիլա գացինք, մարդը ըսաւ. «դրամի համար է, մի՛
վախնաք, քանի որ պանքայէն լսած է ձեր դրամին քանակութիւնը, պիտի
առնեն որ հանգստանան, ես պանքան կ'երթամ կը կարգադրեմ, դուք վեր-
ջը գացէք առէք, թէեւ չէք չունիք, բայց տարած են ինչ ընէք, միայն դրամը
որ տաք աղաչեցէք, որ կարելի է Վահանը հանէ»։ Դարձեալ գացինք պան-
քան, 175 օսմանեան լիրա առինք, բոպիկ ոտքերով իր տունը գացինք, համ-
րեցինք դրամները, երբ լալով ըսինք՝ «պէյ գոնէ Վահանը բանտէն հանէ»՝
«այո,- ըսաւ,- պիտի հանեմ 3 եւ կամ 5 օրէն»։ Տրտում, տխուր գացինք եւ
Վահանին մօր պատմեցինք եղածը։ Եւ իրաւ, 5 օրէն Վահանը տուն եկաւ,
եղածը պատմեցինք։ «Լա՛ւ ըրիք, ինչ ըսեմ» [ըսաւ]։ Երեկոյին Վահանը ա-
ռինք իրեն [միրալայ Մեհմէտ Ալիին] տարինք, ձեռքը պագաւ եւ ըսաւ. «իմ
ընտանիքս 2 օրէն Պոլիս կը ղրկեմ, ձեզ ալ իմ տունս պիտի բերեմ որ բնաւ
չվախնաք, հօր պէս կը նայիմ ձեզ, միւս էրգրումցիներուն ալ հոս կը թողում
իմ խնամքներուս խաթերը»։ Վահանն ալ պատասխանեց «շատ լաւ»։ [Ան]
6 օրէն [իր] ընտանիքը ղրկեց, մենք ուրախ ենք որ տղան հեռացաւ։ Փարա-

³⁰ Թրք.՝ կոշտ։

զիտ³¹ է: Աւագակի նման կը խորհին, իրիկունը տուն կու գայ կը սկսի պատմել: Մէկ օր մըն ալ ըսաւ «Վահան, դուն եւ պզտիկ Պետրոսը [պիտի] թլփատուիք, հիմա կ'երթամ կառք մը ուտելիք կը դրկեմ, թող կերակուր չինեն, վաղը թլփատուիք»: Ախ Աստուած իմ, «երանի մեռնողներուն,- կ'ըսենք,- այս ի՞նչ է»: Պետրոսը, որ 6 տարեկան էր կը հարցունէ՝ «եղածը ի՞նչ է»: «Բան չկայ» [կ'ըսենք]: Երկրորդ օրը տունը անկողիներ եկան՝ պատրաստութիւն. զինուորական մը 2 տղթորներ առած եկաւ, անպիտան մարդն ալ եկաւ, Պետրոսին իր անունը դրած էր, պռռաց՝ «Մեմէտ Ալի եկուր» տղան [Պետրոսը] վազեց: Ես դուրսն [էի]. սկսաւ լացը, տղուն ծայնը առի, որ մայրիկ կը պռռար, գացի, շունը չթողուց [ներս մտնեմ], ըսելով՝ «մուտերէմ էք»³²: Լմեցան [թլփատումը], Վահանին ալ ըրին: Երկրորդ օրը սկսան նուագներ զարնել, պարել, տղան հիանդացաւ կարծելով թէ դարձեալ պիտի սպանեն... Եւ... մեր ընտանիքը 3 ու 1/2 տարի տան մէջ անտանելիին ձեռքին տակ չարչարուեցանք: [Օր մըն ալ] զինքը Պոլիս կանչեցին, մեր ամբողջ տաճկութեան եւ [այլ] թուրքերը պատռեց հեռացաւ: Ես տաճիկի տարազով նիքէի էի, 2 որբերովս միասին ջորեպաններուն հետ Հալէպ փախայ, միւսները կը մնան Խարբերդ մինչեւ հիմա:

THE EYE WITNESS ACCOUNT OF SHUSHANIK DIKRANIAN ON THE FIRST
ARMENIAN CARAVAN EXILED FROM HER NATIVE CITY OF ERZERUM
(SUMMARY)

ANNA KAZARYAN (kazaryananna15@gmail.com)

The article is the first-hand account of Shushanik Tigranyan, a native of Erzurum and the daughter of a renowned family of the city. Tigranyan was among the first caravan of Armenians deported from Erzurum.

Tigranyan survived the uprooting and exile and put into writing her horrible memories of the killings, massacres, lootings and kidnappings she witnessed during the tribulations of her caravan.

It should be noted that this testimony is among the relatively very few eye witness accounts that highlight the deportation of the indigenous Armenians of the city of Erzurum and their tragic exodus.

³¹ Մակարոյծ:

³² Արաբ.՝ արգիլուած էք: